Հայաստանի Ամերիկյան Համալսարան
Ճարտարագիտական Քոլեջ

Հայաստանի Ամերիկյան Համալսարանի
Ճարտարագիտական Հետազոտությունների Կենտրոնը
սիրով հրավիրում է Ձեզ

ՀԱՀ ՍԵՅՍՄԻԿ ՏԱՏԱՆԻՉ ՀԱՐԹԱԿԻ ԲԱՑՄԱՆԸ

որը տեղի կունենա
1995թ. հուլիսի 6-ին, հինգշաբթի օրը,
ժ. 11:00-ին, Փոքր Դահլիճում

Հայաստանի Ամերիկյան Համալսարանի Սեյսմիկ Տատանիչ Հարթակը (ՀԱՀ-ՍՏՀ) իրենից ներկայացնում է 1.5×2.0 մ չափով փորձարարական սեղան, որը ղեկավարվում է հիդրավլիկ տեղափոխիչներով, որոնք կարող են առաջացնել հարմոնիկ կամ երկրաշարժի տիպի գրգռումներ: Շինությունների կամ այլ կառուցվածքների փոքրացված մոդելները կարող են ստուգվել ՀԱՀ-ՍՏՀ-ի վրա՝ նրանց կայունությունը երկրաշարժին որոշելու համար և պարզելու համար նրանց վարքը դինամիկ բեռնվածության տակ: Բացման արարողությունը կներառի հարթակի տեխնիկական բնութագրերի ներկայացում և 9 հարկանի շենքի մոդելի փորձարկում արհեստական երկրաշարժի պայմաններում: Այս սարքը, որի նմանակը չկա Հայաստանում և հարևան երկրներում, ձեռք է բերվել ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության Նվիրատվության շնորհիվ: ՀԱՀ-ՍՏՀ-ն հասանելի կլինի Հայաստանի որակավորված ինժեներներին և գիտնականներին փորձնական հետազոտությունների համար:

Կմատուցվեն սառը խորտիկներ:
Ծրագիրը կտևի մոտ մեկ ժամ: